

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ

Վարկ՝ 4265-AM

**ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ**

Սույն հետաքրքրությունն ցուցաբերելու հրավերը հաջորդում է տվյալ ծրագրով հրապարակված Գնումների Ընդհանուր Ծանուցմանը, ինչը զետեղված է եղել **“Development Business”** պարբերականի 2007թ. հունիսի 16-ի թիվ 704 թողարկման մեջ:

Հայաստանի Հանրապետությունը Միջազգային Զարգացման Ընկերակցության կողմից ստացել է վարկ, իսկ Ճապոնիայի կառավարության կողմից դրամաշնորհ՝ Դատախրավական բարեփոխումներ երկրորդ ծրագիրը իրականացնելու համար, և մտադիր է այդ միջոցների մի մասը ուղղել այդ ծրագրով նախատեսված պայմանագրերով վճարումներ կատարելուն, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի տասնամյակի նվիրված վավերագրագան տեսաֆիլմ պատրաստելու առաջադրանքը կատարելու նպատակով, որոնց վերաբերյալ մանրամասները նշված են ստորև: Սույն ծրագիրը կհամաֆինանսավորվի նաև Հայաստանի Հանրապետության կողմից:

Պահանջվող ծառայությունները ներառում են ՀՀ վճռաբեկ դատարանի ստեղծման տասնամյակի կապացությամբ ՀՀ դատական համակարգի ստեղծման, ձևավորման և զարգացման ուղիները նկարագրող 10-15 բուպե տևողությամբ հեռուստատեսային հեռարձակման ստանդարտներով պատրաստ վավերագրական տեսաֆիլմի նկարահանում, մոնտաժում և կրիչների վրա վերջնական արդյունքի բազմացում: Նշված առաջադրանքը նախատեսվում է կատարել 2008թ. հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում, նախատեսելով մոտավորապես 6 մարդ/ամիս ներգրավման աստիճան:

Ելնելով նշվածից, ներկայումս «Դատախրավական բարեփոխումներ ԾԻԳ» ՊՀ-ը առաջարկում է բոլոր իրավասու խորհրդատու կազմակերպություններին, այն է՝ վավերագրական ֆիլմերի և հեռուստահաղորդումների արտադրության փորձ ունեցող կազմակերպություններին ցուցաբերել իրենց հետաքրքրությունը նշված ծառայությունները մատուցելու նպատակով: Հետաքրքրված խորհրդատու կազմակերպությունները պետք է տրամադրեն տեղեկատվություն, որով կարտացույցի նրանց իրավասությունը նման ծառայություններ մատուցելու համար (կազմակերպության նկարագիրը, իրականացված նմանատիպ առաջադրանքների նկարագրությունը, նման աշխատանքների կատարման փորձը, ներգրավվող աշխատակազմի որակավորման տվյալները և այլն): Ի լրումն նշվածի, հետաքրքրություն ցուցաբերելու նամակին պետք է կցվեն կազմակերպության պետական գրանցման փաստաթղթերի լուսապատճենները: Խորհրդատու կազմակերպությունները կարող են գործել նաև համատեղ՝ որակավորման պահանջներին բավարարելու նպատակով:

Խորհրդատու կազմակերպությունը ընտրվելու է Համաշխարհային Բանկի կողմից 2004թ. մայիսին ընդունված «Համաշխարհային Բանկի Փոխառումների կողմից Խորհրդատուների Ընտրություն և Վարձում» Ուղեցույցներ- ի պահանջների համաձայն:

Հետաքրքրված խորհրդատու կազմակերպությունները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ ստորև նշված հասցեով յուրաքանչյուր աշխատանքային օրվա ժամը 9:00-ից մինչև 18:00:

Հետաքրքրություն ցուցաբերելու գրությունները պետք է առաքվեն ստորև նշված հասցեով մինչև 2008թ. հունիսի 13-ը ներառյալ:

**«Դատախրավական բարեփոխումներ ԾԻԳ» ՊՀ**  
Արթուր Թունյան, տնօրեն  
Թումանյան փող. 21/1, Երևան, 0001 Հայաստան  
Հեռ.: +37410-545684  
Ֆաքս՝ +37410-545683  
Էլ. հասցե՝ [jрпиu@arminco.com](mailto:jрпиu@arminco.com)